Սահման

Տղերքը վերադարձան հրաձգությունից: Նրանք հոգնած էին, փոշեթաթախ հագուստներով: Առավոտից գնացել էին սարերը, առաջին անգամ մասնակցել «ճակատամարտին»: Վերադարձան մեքենայի թափքում մի կերպ նստած, իրար կպած: Ոմանք նույնիսկ ոտքով էին գալիս... Տեղ հասան, իջան մեքենաներից, ըստ ջոկատների շարք կանգնեցին, կարգի բերեցին զինվորական հագուստները:

Երկաթե դարպասը ճռռոցով հետ գնաց և զինվորական մեքենայի դուրս գալուց հետո դարձյալ անդուր ճռռոցով փակվեց: Հրաման եղավ գնալ ճաշարան: Երեկոյան ժամը ինն էր: Տղերքը հոգնած էին ու քաղցած: Ուժեղները գնում էին ձիգ ու հաստատուն քայլերով: Իսկ թույլերը հազիվ էին քարշ տալիս իրենց ոտքերը և կրտսեր հրամանատարի կարգադրությունն ասես չէին լսում, նրանց հոգնած ոտքերը ոչ մի հրամանի չէին ենթարկվում:

Իրենց զավակներին տեսնելու եկած մի քանի ծնողներ փորձեցին գլուխները ներս մտցնել դարպասի երկաթե ճաղերից: Պահակող ռուս զինվորին խնդրեցին, որ կանչի Մակիևին: Իլյա Մակիևը ուսումնական կենտրոնի պետն է: Զինվորը, օրվա ընթացքում բազմաթիվ հարցումներից հոգնած ու ձանձրացած, համբերահատ պոռթկաց. «Դուք, ախր, խիղճ ունե՞ք: Նա առավոտյան ժամը յոթին է տնից դուրս եկել ու նոր միայն վերադառնում է տուն, թողեք գոնե մի երկու ժամ հանգստանա: Ձեր տղաներն էլ պետք է հանգստանան»: Ծնողներից ոմանք դարձյալ փորձեցին լեզու գտնել ռուս զինվորի հետ: Ապարդյուն:

Այստեղ, ուսումնական կենտրոնում են մեր տղաներն ստանում զինվորական մըկրտությունը: Դժվար են առաջին քայլերը: Արտաշատի սահմանապահ ջոկատների շտաբի պետ Յուրի Բլյուդիկի աշխատասենյակում հենց այդ պահին ծանր խոսակցություն էր գնում: Հայր ու որդի ընկճված տեսքով նստել են շտաբի պետի աշխատասենյակում: Հայրը չի փորձում արդարացնել որդու փախուստը:

— Հասկանո՞ւմ եք, ինքը երեխա է, բայց ամուսնացել ու երեխա էլ ունի: Ասացի՝ գընամ կնոջդ ու երեխայիդ բերեմ, տես, կարոտդ առ: Սկզբում համաձայնեց, բայց տուն հասնելուց երկու ժամ չանցած՝ ինքն էլ եկավ:

Շտաբի պետը խնդմնդաց քթի տակ ու միայն իրեն լսելի ձայնով ասաց. «Նրան պետք էր, որ ինքը գնար կնոջ մոտ: Այդքան հատարակ բա՞նն էլ չես հասկանում»:

Այո, նաև այսպես է լինում: Ոմանք չեն կարողանում տանել առաջին օրերի դժվարությունները: Փախչում են միայն թույլերը: Նրանցից շատերը ընտելացել են ազատ կյանքին. ուզածի չափ քնում են: Մոր եփած ճաշին են սովոր: Իսկ հիմա օրվա ընթացքում քաղում են մի քանի ժամ, անսովոր վարժություններ անում: Շոգ է, դժվար է քայլելը, բայց, չգիտես ինչու, այս տապին զինվորներին հագցրել են երկարաճիտ կոշիկներ: Դե, ի՞նչ կարող ես անել, ծառայություն է, այն էլ ոչ սովորական: Հայաստանի սահմանը ուժեղները պետք է պաշտպանեն:

— Դժվարություններ, իհարկե, կան, մանավանդ՝ ֆինանսական: Բայց ամենից շատ անհանգստացնում են ծնողների հետ տարվող «բանակցությունները»: Նոր-նոր ծառայության եկած զինվորների ծնողները շատ են շրջապատում մուտքի դարպասը: Մեր ոչ մի բացատրություն նրանց չի գոհացնում:

Իսկ տղաներն իրենք ի՞նչ կարծիք ունեն:

— Այսքան տանը մոտիկ ու այսքան հեռու: Դե ինչպե՞ս կարելի է չգնալ տուն,— ասում է մի զինվոր,— տունը քթերիս տակ է:

— Իսկ եթե հեռվում ծառայեի՞ք, Հայաստանից դուրս:

Նա թոթվում է ուսերը:

— Այ, դուք մեղադրում եք ծառայությունից փախչողներին: Իսկ նրանք, ովքեր խուսափում են բանակային ծառայությունից, ամեն քայլի դիմում՝ զինկոմիսարիատներ չներկայանալու համար, նրանց հետ ինչպե՞ս են վարվելու: Չէ՞ որ նրանցից ոչ մեկը չի պատժվում,— խոսքն ինձ է ուղղում տղաներից մեկը:

— Նրանք էլ պատիժ կստանան: Անպայման:

Զինվորը չի հավատում ինձ: Ես դա կարդում եմ նրա աչքերում:

Յու. Բլյուդիկը ցույց է տալիս «փախստականների» ցուցակը:

— Կարծում եմ, մոտակա շրջանների տղաներին այստեղ չպետք է բերել: Եթե հեռավոր շրջաններից գան, ծառայությունը կանոնավոր կընթանա: Նրանք չեն մտածի փախուստի մասին:

Գուցե իրավացի է շտաբի պետը:

Սահմանը բոլորինն է: Մեր սահմանը այս տղաները պետք է պաշտպանեն: Եվ անգամ նրանք, ովքեր փախչում են: Ու նաև նրանք, ովքեր ընդհանրապես չեն ուզում ծառայել, քաղաքից, հանրապետությունից են փախչում: Պարտադիր ծառայության պիտի կանչել նաև նրանց, ովքեր առևտուր են անում, հանգիստ, անհոգ թրևում քաղաքում: Պարտադիր: Հանրապետության քաղաքացի բոլոր զինակոչիկներին:

Շրջեցի «կազարմաները»: Ոչ մի փոփոխություն, մի քանի տասնյակ տարիների վաղեմություն ունեցող հսկայական սենյակ է, որտեղ երկհարկանի մահճակալների վրա քնում են հարյուր-հարյուր հիսուն զինվոր:

Քայլում եմ ուսումնական կենտրոնի պետի տեղակալ Իգոր Կրուգլյակի հետ:

— Ովքեր արդեն ծառայում են մեկ ամիս, ընտելացել են ծառայությանը: Ֆիզիկապես ոմանք շատ թույլ են, չեն դիմանում: Դպրոցներում ուշադրություն չի դարձվում ռազմագիտությանը: Ահա թե ինչու թույլերը փախչում են: Ոմանց ծնողները պնդում են, թե իրենք շրջապատ ունեն, դատավոր ու դատախազ բարեկամ ունեն, կդիմեն նրանց օգնությանը: Ինչո՞ւ են այդպես մտածում այդ ծնողները: Չէ՞ որ այս սահմանը մենք պիտի պաշտպանենք:

Երեկոյան ժամը ինն է: Ուսումնական մասի պետ Իլյա Մակիևը, մարզական հագուստ հագին, կանգնել է հրապարակի մի անկյունում ու նայում է քաղող տղաներին: Հետո իր մոտ է կանչում կրտսեր հրամանատարին և դիտողություն անում:

— Նվագն ո՞ւմ համար է: Այնպես են քայում, ասես զբոսանքի են դուրս եկել:

Դարպասի մոտ դարձյալ ծնողներ են հավաքվել:

— Մինչև սահման ընդամենը երեք կիլոմետր է,— ասաց տեղաբնակներից մեկը,— այսինքն՝ սահմանը մեր քթի տակ է: Այս տղաները կոփված մարտիկներ պիտի դառնան, որ մենք թիկունքում հանգիստ ու ապահով լինենք, մեր օջախների ծուխը ծխանք:

Երեկոյան հերթափոխը սահման է գընում: Իսկ ուսումնառությունն ավարտելուց ու երդում տալուց հետո վաղը մեր տղաներն են գնալու սահման: Հայրենիքի սահմանները պետք է պաշտպանեն նրանք, ովքեր սիրում են հայրենի հողը, ովքեր նվիրված են այս հողին...

Դերենիկ ՔԱՄԱԼՅԱՆ

Ուսումնական կենտրոնում նորակոչիկները տիրապետում են սահմանապահ զինվորին այնքան անհրաժեշտ ունակություններին, ձեռք բերում սահմանի վրա ամեն րոպե պետք եղող գիտելիքներ, դառնում զգոն և աչալուրջ տղամարդիկ: Այստեղ՝ հրաձգարանում, նրանք կարող են և վրիպել, բայց քիչ այն կողմ, որտեղ հայրենիքի սահմանն է, վրիպելու իրավունք չկա:

Լուսանկարները՝ Արտակ ՔԱՄԱԼՅԱՆԻ